Համաձայն «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
Վարչության 01.03.2021 թվականի որոշման
Գործում է 16.03.2021 թվականից

# ABB – ԱՇԽԱՏԱՎԱՐՁ և ABB –ԱՇԽԱՏԱՎԱՐՁ +
# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Բանկի պլաստիկ քարտերի միջոցով ստացվող աշխատավարձի հիման վրա
ֆիզիկական անձանց տրամադրվող կրեդիտի և վարկային գծի պայմաններն ու սակագները
(սեփական ռեսուրսներով)

**Սույն հավելվածով սահմանված պայմանները կիրառելի են նաև անհատական պայմաններով աշխատավարձային նախագծերի համար մինչև 2021 թվականի ապրիլի 30-ը ներառյալ:**

| | | Բանկի հետ աշխատավարձային նախագծերի շրջանակներում համագործակցության պայմանագիր կնքած կազմակերպությունների աշխատակիցներին աշխատավարձի ապահովվածությամբ կրեդիտ/վարկային գիծ | | | | Հավատարմագրված կազմակերպությունների աշխատակիցներին աշխատավարձի ապահովվածությամբ կրեդիտ/վարկային գիծ |
|---|---|---|---|---|---|---|
| **1.** | **Կրեդիտի/Վարկային գծի հիմնական պայմաններ** | | | | | |
| 1.1 | Արժույթ | ՀՀ դրամ | | | | |
| 1.2 | Տարեկան անվանական տոկոսադրույք | **19%** | • **14%** - 5.3 կետի 1-ին, 2-րդ խմբերի հաճախորդների համար<br>• **15 %**- 5.3 կետի 3-րդ, 4-րդ խմբերի հաճախորդների համար<br>• **16 %**- 5.3 կետի 5-րդ Խմբի հաճախորդների համար | **0%** | **12%** | **18%** |
| 1.3 | Տարեկան փաստացի տոկոսադրույք | 20.7% | 14.9% - 17.9% | 22.4% - 23.9% | 14.2% - 19.4% | 20.2% |
| 1.4 | Տեսակ | • Վերական գնվող վարկային գիծ | • Կրեդիտ<br>• Մասնակի վերականգնվող վարկային գիծ | • Կրեդիտ | • Կրեդիտ<br>• Մասնակի վերական գնվող վարկային գիծ | • Կրեդիտ<br>• Մասնակի վերականգնվող վարկային գիծ |
| 1.5 | Ժամկետ | 6-36 ամիս | 6-60 ամիս | 36-60 ամիս | 12 ամիս | 6-36 ամիս |
| 1.6 | Վարկ/գրավ առավելագույն հարաբերակցություն | 100% | | | | |
| 1.7 | Վարկային գծի չօգտագործված մասի նկատմամբ հաշվեգրվող տոկոսադրույք | 0 % | | | | |
| 1.8 | Տոկոսագումարների հաշվարկման կարգ | • Կրեդիտի դեպքում տոկոսադրույքը կիրառվում է կրեդիտի նվազող մնացորդի նկատմամբ<br>• Վարկային գծի դեպքում՝ տոկոսադրույքը կիրառվում է վարկային գծի օգտագործված մասի նկատմամբ | | | | |
| 1.9 | Մարման եղանակ | • <u>**Կրեդիտի դեպքում**</u><br>✓ կրեդիտի գումարի ամենամսյա հավասարաչափ մարում և հաշվեգրված տոկոսների | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | ամենամսյա մարում,<br>✓ կրեդիտի գումարի և հաշվեգրված տոկոսների ամենամսյա հավասարաչափ մարում /անուիտետ/<br>• **Վերականգնվող վարկային գծի դեպքում.**<br>ամենամսյա պարտադիր մուտք վարկային գծի հաշվին՝ նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ օգտագործված վարկային գծի նվազագույնը 10%-ի չափով և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում,<br>• **Մասնակի վերականգնվող վարկային գծի դեպքում.**<br>վարկային գծի սահմանաչափի ամենամսյա հավասարաչափ նվազեցում/մարում/ և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում | | | | |
| 1.10 | Նվազագույն գումար | 30.000 ՀՀ դրամ | | | | |
| 1.11 | Առավելագույն գումար | Համաձայն սույն պայմանների 5.8 կետի, բայց ոչ ավել 6.000.000 ՀՀ դրամ | | | | Համաձայն սույն պայմանների 5.8 կետի, բայց ոչ ավել 3.000.000 ՀՀ դրամ |
| 1.12 | Կրեդիտի/Վարկային գծի տրամադրման համար պարտադիր պայման | Հայբիզնեսբանկի պլաստիկ քարտին առնվազն մեկ ամսվա աշխատավարձի մուտք, եթե հաճախորդը չի ներկայացնում բանկային հաշվից քաղվածք, այլ ներկայացնում է զբաղվածության և եկամուտների մասին տեղեկանք | | | | Հայբիզնեսբանկի պլաստիկ քարտին առնվազն երեք ամիս աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների մուտք |
| 1.13 | Տրամադրման եղանակ | • Կրեդիտը տրամադրվում է միանվագ՝ կանխիկ<br>• Վարկային գիծը տրամադրվում է անկանխիկ՝ աշխատավարձային քարտային հաշվին | | | | |
| 1.14 | Վաղաժամկետ մարում | Թույլատրվում է, տույժեր և տուգանքներ չկան | | | | |
| **2.** | **Բանկի միջնորդավճարներ** | | | | | |
| 2.1 | Հայտի ուսումնասիրության վճար | - | | | | |
| 2.2 | Կրեդիտի/Վարկային գծի սպասարկման միանվագ միջնորդավճար /գանձվում է միանվագ կրեդիտի/վարկային գծի տրամադրման դեպքում/ | - | - | - | Պայմանագրի գումարի 3% | - |
| 2.3 | Կրեդիտի/Վարկային գծի սպասարկման ամսական միջնորդավճար | - | - | Պայմանագրի գումարի 1% | - | - |
| 2.4 | Սպասարկման ամսական միջնորդավճարի հաշվարկման և մարման կարգ | Ամսական միջնորդավճարը հաշվարկվում է կրեդիտի սկզբնական գումարից՝ անկախ տվյալ պահին առկա կրեդիտի մնացորդի չափից:<br><br>Կրեդիտի վաղաժամկետ մարման դեպքում վճարվում է նաև մինչ մարման օրը հաշվեգրված միջնորդավճարը: | | | | |
| 2.5 | Կրեդիտի/Վարկային գծի միջոցների կանխիկացում | • Կրեդիտի դեպքում՝ համաձայն աշխատավարձային քարտի սակագների, բայց ոչ ավել 0,3%.<br>• Վարկային գծի դեպքում՝ համաձայն աշխատավարձային քարտի սակագների | | | | • Կրեդիտի դեպքում՝ 0,3%.<br>• Վարկային գծի դեպքում՝ համաձայն բանկում գործող ծառայությունների սակագներով տվյալ տեսակի վճարային քարտի համար սահմանված սակագների |
| 2.6 | 3-րդ (և լրացուցիչ) Կրեդիտի տրամադրման/ Վարկային գծի սահմանաչափի ավելացման միանվագ վճար | Սույն կետը կիրառելի է միայն 5-րդ խմբի հաճախորդների համար<br><br>Տրամադրվող Կրեդիտի գումարի կամ Վարկային գծի ավելացվող գումարի 1%<br><br>Վճարը գանձվում է եթե Վարկառուն Բանկում ունի ABB-ԱՇԽԱՏԱՎԱՐՁ կամ ABB-ԱՇԽԱՏԱՎԱՐՁ+ վարկատեսակների շրջանակներում գործող թվով 2 վարկ/վարկային գիծ և իրեն հասանելի սահմանաչափի շրջանակներում ցանկանում է ձևակերպել ևս նոր վարկային պայմանագիր կամ ավելացնել գործող վարկային գծի սահմանաչափը: Վճարի հաշվարկը կատարվում է նոր տրամադրվող Կրեդիտի գումարի կամ Վարկային գծի ավելացվող գումարի համար: | | | | |

| | | | |
|---|---|---|---|
| **3.** | **Ապահովվածություն** | | |
| 3.1 | Ապահովվածություն | Քարտային (աշխատավարձային) հաշվից բխող դրամական պահանջի իրավունքի գրավ, սահմանված դեպքերում՝ նաև երաշխավորություն | |
| **4.** | **Վարկառուի/երաշխավորի նկատմամբ պահանջներ** | | |
| 4.1 | Վարկառուի/երաշխավորի եկամուտներ | Աշխատավարձ | |
| 4.2 | Վարկառու | • 21 տարին լրացած ՀՀ-ում կամ ԱՀ-ում հաշվառված ֆիզիկական անձ - քարտապան, որի տարիքը Կրեդիտի/Վարկային գծի մարման վերջնաժամկետին չի գերազանցում 63 տարին,<br>• Վարկառուն առնվազն երեք ամիս պետք է հանդիսանա կազմակերպության աշխատակից | |
| 4.3 | Վարկային պատմությանը ներկայացվող պահանջներ /վարկառու/երաշխավոր/ | • Կրեդիտի/ Վարկային գծի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես չաշխատող, իսկ այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է դասակարգված լինեն որպես չաշխատող.<br>• եթե Կրեդիտի/Վարկային գծի գումարը կազմում է զուտ աշխատավարձի **տասնապատիկից ավել՝** վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր (մարված և գործող) վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը չպետք է գերազանցի 12 օրացուցային օրը. | • Կրեդիտի/ Վարկային գծի տրամադրման որոշումը կայացնելու պահին գործող վարկային պարտավորությունները չպետք է լինեն ժամկետանց կամ դասակարգված որպես չաշխատող, իսկ այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները չպետք է դասակարգված լինեն որպես չաշխատող.<br><br>• Վերջին 12 ամիսների ընթացքում բոլոր (մարված և գործող) վարկերի ժամկետանց օրերի ընդհանուր հանրագումարը չպետք է գերազանցի 30 օրացուցային օրը. |
| 4.4 | Երաշխավոր | • 21-63 տարեկան ռեզիդենտ ֆիզիկական անձ,<br>• Գրանցման առկայություն ՀՀ-ում կամ ԱՀ-ում,<br>• Վարկառուի ընտանիքի անդամ (հայր, մայր, քույր, եղբայր, ամուսին, երեխա) **չհանդիսացող** Վարկառուի հետ համապարտ պատասխանատվություն կրող անձ, ով պարտավորվում է պատասխանատվություն կրել վարկառուի կողմից իր պարտավորությունը լրիվ կամ մասնակի կատարելու համար և որի պարտավորությունը ծագում է այն դեպքում, երբ վարկառուն չի կատարում կամ մասնակի է կատարում իր պարտավորությունը:<br>• Կրեդիտի/Վարկային գծի տրամադրման որոշումը կայացնելու պահին Երաշխավորի այլ անձանց պարտավորությունների դիմաց տրամադրված բոլոր բանկերում և վարկային կազմակերպություններում գործող երաշխավորությունների և սույն պայմանների համաձայն նոր տրամադրվող երաշխավորության պայմանագրերի հանրագումարը (հաշվարկի մեջ ներառվող պարտավորությունների գումարները վարկերի դեպքում ներառվում են վարկի մնացորդի չափով, իսկ վարկային գծի/օվերդրաֆտի դեպքում՝ պայմանագրային գումարից և մնացորդային գումարից/սահմանաչափից առավելագույնով) չպետք է գերազանցի 6,000,000 ՀՀ դրամ գումարը և երաշխավորությունների պայմանագրերի քանակը չպետք է գերազանցի 3 հատը (ընդ որում Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ում "ABB–ԱՇԽԱՏԱՎԱՐՁ" և "ABB–ԱՇԽԱՏԱՎԱՐՁ+" վարկատեսակների շրջանակներում նույն անձի պարտավորությունների դիմաց տրամադրված երաշխավորությունները, անկախ պայմանագրերի քանակից համարվում են մեկ հատ): | |
| **5.** | **Լրացուցիչ պայմաններ** | | |
| 5.1 | Դիմում-հայտի մերժումը | • Հաճախորդի կողմից չեն ներկայացվել Կրեդիտ/Վարկային գիծ ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը,<br>• Հաճախորդի անունով բոլոր բանկերում և վարկային կազմակերպություններում առանց գույքի գրավի և իրավունքի գրավի ապահովվածությամբ գործող և սույն պայմանների համաձայն նոր տրամադրվող վարկերի/վարկային գծերի մնացորդների/սահմանաչափերի հանրագումարը չպետք է գերազանցի վերջին 6 ամսվա ընթացքում ստացված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծության 12ապատիկը: | |

| | | |
|---|---|---|
| | | • Առկա է Հաճախորդի գործող վարկային պարտավորությունների գծով խիստ ծանրաբեռնվածություն.<br>• ԱՔՌԱ վարկային բյուրո հարցման արդյունքում պարզվել է, որը Հաճախորդը (առկայության դեպքում երաշխավորը) ունի բացասական վարկային պատմություն:<br>• Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի է դարձել Հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում Հաճախորդի կողմից ներկայացված տեղեկությունը կամ Կրեդիտի/Վարկային գծի վերադարձելիությունը: |
| 5.2 | Վարկառուի կողմից վարկային պարտավորությունների չկատարման դեպքում | • ***Ժամկետանց տոկոսների գծով Բանկը Վարկառուից գանձում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ժամկետանց գումարի 0,13%-ի չափով,***<br>• ***Ժամկետանց պարտավորությունները կատարելու դեպքում՝ մարումները իրականացվում են հետևյալ հերթականությամբ՝***<br>***1) <u>Տույժ/տուգանքներ</u>***<br>***2) <u>Տոկոսագումարներ</u>***<br>***3) <u>Մայր գումար</u>***<br>• ***Կրեդիտը/Վարկային գիծը պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարվելու դեպքում պայմանագրով նախատեսված տոկոսների հաշվարկը դադարում է և այդ օրվանից ժամկետանց գումարի նկատմամբ մինչև ժամկետանց պարտքի փաստացի կատարման օրը հաշվարկվում են տոկոսներ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով,***<br><br>***ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ԹԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՄԻՆՉԵՎ 7 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐ ՀԵՏՈ ԱՅԴ ՏՎՅԱԼՆԵՐԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ, ՈՐՏԵՂ ՁԵՎԱՎՈՐՎՈՒՄ Է ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ: ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈՅԻՑ ՏԱՐԵԿԱՆ ՄԵԿ ԱՆԳԱՄ ԱՆՎՃԱՐ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ ԻՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ:***<br>**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏԵԼ ՁԵԶ՝ ԱՊԱԳԱՅՈՒՄ ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ:** |
| 5.3 | Գործատու կազմակերպությունների խմբեր | **Խումբ 1.** - ՀՀ և ԱՀ նախագահի աշխատակազմ; Ազգային ժողով; Կառավարություն և ենթակա մարմիններ; նախարարություններ; մարզպետարաններ; քաղաքապետարաններ; նախարարությունների, մարզպետարանների և քաղաքապետարանների ենթակայության տակ գտնվող կազմակերպություններ; պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ; վարչական շրջաններ; ՀՀ Կենտրոնական Բանկ.<br>**Խումբ 2.** – համայնքային և պետական ոչ առևտրային կազմակերպություններ՝ դպրոցներ, մանկապարտեզներ, պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ.<br>**Խումբ 3.** - բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ, ներդրումային ընկերություններ.<br>**Խումբ 4.** 100 խոշոր հարկատուների ցանկում ընդգրկված կորպորատիվ հաճախորդներ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ ռազմավարական կորպորատիվ հաճախորդներ.<br>**Խումբ 5.** - 1-4- խմբերում չընդգրկված կորպորատիվ հաճախորդներ: |
| 5.4 | Հաճախորդի այլ ծախսեր | Բացակայում են |
| 5.5 | Վարկային հայտի ուսումնասիրության ժամկետ | 5 աշխատանքային օր |
| 5.6 | Կրեդիտի/Վարկային գծի ձևակերպման վայր | Բանկի գլխամասային գրասենյակ և մասնաճյուղեր (բացառությամբ Արարատյան և Կոմայրի մասնաճյուղերի) |
| 5.7 | Այլ պայմաններ | • Եթե հաճախորդը նույն քարտով ստանում է աշխատավարձ տարբեր կազմակերպություններից, որոնք համապատասխանում են սույն պայմանների 5.3 կետին և/կամ հավատարմագրված կազմակերպություններ են՝ մեկ կազմակերպությունից ստացվող աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների մասով Կրեդիտը/Վարկային գիծը տրամադրվում է համաձայն տվյալ կազմակերպության հետ կնքված համագործակցության պայմանագրով սահմանված պայմանների: Եթե Հաճախորդը ցանկանում է Կրեդիտ/Վարկային գիծ ստանալ ընդհանուր երկու և ավել կազմակերպություններից ստացված աշխատավարձային վճարումների մասով, և կազմակերպությունների հետ կնքված համագործակցության պայմանագրերի շրջանակներում վարկավորման պայմանները տարբերվում են, ապա Կրեդիտի/Վարկային գծի տոկոսադրույքը սահմանվում է առավելագույն տոկոսադրույքով, իսկ մնացած պայմանները համաձայն տվյալ տոկոսադրույքի համար սահմանված պայմանների:<br>• ***Վարկառուի մեկ աշխատավարձային քարտին կարող է տրամադրվել թվով մեկ*** |

| | | |
|---|---|---|
| | | ***վարկային գիծ և անսահմանափակ թվով Կրեդիտներ: Վարկառուին տրամադրված Կրեդիտների և Վարկային գծերի հանրագումարը չպետք է գերազանցի սույն պայմանների 1.11 կետով սահմանված առավելագույն գումարը:***<br><br>• *Սույն պայմանների 5.3 կետով սահմանված Խումբ 1 և խումբ 2 կազմակերպությունների աշխատակիցներին Քարտերի և վարկերի/վարկային գծերի տրամադրումը կարող է իրականացվել նաև առանց Կազմակերպության հետ Բանկային վճարային քարտերի միջոցով աշխատավարձային նախագծերի իրականացման պայմանագիր կնքելու: Աշխատավարձային քարտի բացումը իրականացվում է հաճախորդի կողմից ներկայացված զբաղվածության տեղեկանքի հիման վրա՝ գործատուի պաշտոնական բլանկի վրա տպված, որտեղ նկարագրված կլինի տվյալ Կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնի և աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկատվություն: Քարտերի պայմանները և սակագները համաձայն Բանկում գործող “Աշխատավարձային սակագնային փաթեթ “Բազային-1”” սակագների: Վարկերի/վարկային գծերի տրամադրումը իրականացվում է համաձայն սույն պայմանների 5.3 կետով սահմանված Խումբ1 և Խումբ2 համար նախատեսված պայմանների և պահանջների:* |

| 5.8. | վերջին 6** ամսվա ընթացքում ստացված զուտ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծություն՝ այսուհետ ՄԻՋԻՆ ԵԿԱՄՈՒՏ | Խումբ 1 | Խումբ 2 | Խումբ 3 | Խումբ 4 | Խումբ 5 | Հավատարմագրված կազմակերպության աշխատակիցների համար |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Առավելագույն գումար** | | **6.000.000 ՀՀ դրամ** | **6.000.000 ՀՀ դրամ** | **3.000.000 ՀՀ դրամ** | **3.000.000 ՀՀ դրամ** | **3.000.000 ՀՀ դրամ** | **3.000.000 ՀՀ դրամ** |
| Կրեդիտ / Մասնակի վերականգնվող վարկային գծեր | միայն աշխատավարձի ստացման իրավունքի դեպքում | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 7ապատիկը, բայց ոչ ավել քան 5.000.000 ՀՀ դրամը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 7ապատիկը, բայց ոչ ավել քան 4.000.000 ՀՀ դրամը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 4ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 4ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 4 ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 3ապատիկը |
| | նաև անշարժ գույքի գրավով տվյալ հաճախորդի անունով վարկ/վարկային գիծ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ում ունենալու դեպքում | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 10ապատիկը, բայց ոչ ավել քան 5.000.000 ՀՀ դրամը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 10ապատիկը, բայց ոչ ավել քան 4.000.000 ՀՀ դրամը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 7ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 7ապատիկը | - | - |
| | նաև ոսկու գրավով վարկ/վարկային գիծ տվյալ հաճախորդի անունով ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ում ունենալու դեպքում | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 9ապատիկը, բայց ոչ ավել քան 5.000.000 ՀՀ դրամը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 9ապատիկը, բայց ոչ ավել քան 4.000.000 ՀՀ դրամը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 6ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 6ապատիկը | - | - |
| | նաև տվյալ հաճախորդի անունով պարբերաբար փոխանցումների ստացման դեպքում *** | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 9ապատիկը, բայց ոչ ավել քան 5.000.000 ՀՀ դրամը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 9ապատիկը, բայց ոչ ավել քան 4.000.000 ՀՀ դրամը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 6ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 6ապատիկը | - | - |
| | նաև տվյալ հաճախորդի անունով անշարժ գույքի գրավով վարկ/վարկային գիծ ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ում ունենալու դեպքում՝ միաժամանակ երրորդ անձի երաշխավորություն ներկայացնելու դեպքում | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 12ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 12ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 12ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 12ապատիկը | - | - |
| | պահանջվում է երրորդ անձի երաշխավորություն (կատարվում է OTI հաշվարկ) **** | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 12ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 12ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 12ապատիկը | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 12ապատիկը | - | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 5ապատիկը |
| Վերականգնվող վարկային գծեր | աշխատավարձի ստացման իրավունքի դեպքում | ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 3ապատիկի չափով | | | | | |

**Եթե վերջին 6 ամիսների ընթացքում աշխատանքային փորձը փոքր է 6 ամսից, բայց գերազանցում է 3 ամիսը, ապա աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծության հաշվարկի համար համապատասխան ամիսների ընթացքում ստացված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների ընդհանուր գումարը բաժանվում է 6-ի:

Հայբիզնեսբանկի քարտով աշխատավարձի ստացումը 6 ամսից պակաս լինելու դեպքում ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ հաշվարկման համար հիմք են ընդունվում հետևյալ մեծությունները՝ Հայբիզնեսբանկի քարտով փաստացի ստացված մեծությունը համապատասխան ամիսների համար և մնացած ամիսների համար՝ այլ բանկերի քաղվածքներում կամ տեղեկանքում նշված մեծությունը

| |
|---|
| *** վերջին 6 ամսվա ընթացքում առնվազն 6 անգամ արագ դրամական փոխանցման համակարգերով գումարի ստացում, ընդ որում 6 ամսվա կտրվածքով ստացված փոխանցման միջին գումարը պետք է մեծ լինի ՄԻՋԻՆ ԵԿԱՄՏԻ 50%-ից |
| **** Եթե պահանջվող  Կրեդիտի/Վարկային գծի գումարը գերազանցում է վերջին 6 ամսվա ընթացքում ստացված զուտ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների միջին ամսական մեծության **յոթապատիկը**՝ հաշվարկվում է Ընդհանուր պարտքային վճարումներ/Զուտ եկամուտներ՝ OTI գործակիցը, որը չպետք է գերազանցի 45% (Ընդհանուր պարտքային վճարումներում հաշվի չեն առնվում գործող ոսկու գրավով վարկային պարտավորությունները): |

| *Կրեդիտի/Վարկային գծի ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ* | Հաճախորդից պահանջվող | Երաշխավորից պահանջվող |
|---|---|---|
| Անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ նույնականացման քարտ) | ✓ | ✓ |
| Սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ, բացակայության դեպքում՝ տեղեկանք համապատասխան մարմնից<br>(նույնականացման քարտ ներկայացնելու դեպքում չի պահանջվում) | ✓ | ✓ |
| • Քաղվածք աշխատավարձային քարտային հաշվից՝ վերջին 6 ամսվա կտրվածքով (Հայբիզնեսբանկի քարտով աշխատավարձի ստացումը 6 ամսից պակաս լինելու դեպքում՝ ներկայացվում է նաև այլ բանկում նախկինում սպասարկված աշխատավարձային քարտային հաշվի քաղվածքը ) կամ<br>• եթե հաճախորդը վերջին 6 ամիսների ընթացքում աշխատավարձը չի ստացել բանկային քարտով, ապա ներկայացնում է զբաղվածության և եկամուտների մասին տեղեկանք՝ գործատուի պաշտոնական բլանկի վրա տպված, որտեղ նկարագրված կլինի տվյալ ընկերությունում զբաղեցրած պաշտոնի, աշխատանքային ստաժի, ինչպես նաև վերջին 6 ամիսների ընթացքում փաստացի ստացված եկամուտների վերաբերյալ տեղեկատվություն | ✓ | - |
| Եկամուտների փաստը հավաստող փաստաթուղթ՝ գործատուի կողմից տրված տեղեկանք կամ քաղվածք աշխատավարձային քարտի հաշվից (աշխատավարձի ստացումը 6 ամսից պակաս լինելու դեպքում՝ ներկայացվում է քաղվածք ստացված փաստացի ամիսների կտրվածքով) | - | ✓ |
| Եթե վարկավորման գումարը կախված է անշարժ գույքի գրավով վարկ/վարկային գիծ կամ ոսկու գրավով վարկ/վարկային գիծ ունենալու հանգամանքից՝ վարկային քաղվածք | ✓ | - |
| Եթե վարկավորման գումարը կախված է փոխանցումների ստացման հանգամանքից՝ փոխանցումների ստացման անդորրագրերը կամ տեղեկանք բանկից | ✓ | - |
| Այլ փաստաթղթեր ըստ անհրաժեշտության | ✓ | ✓ |

## ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝

Տեղեկացնում ենք, որ

- եթե վարկառուն չկատարի պարտավորությունները, ապա Դուք եք վճարելու իր փոխարեն, վատանալու է Ձեր վարկային պատմությունը և զրկվելու եք Ձեր գույքից,
- Ձեզ տրամադրվելու է վարկային, երաշխավորության պայմանագրերի և մարման գրաֆիկի օրինակ,
- Հաղորդակցումն իրականացվելու է Ձեր կողմից ընտրված եղանակով,
- 7 օր առաջ ծանուցվելու եք պայմանագրի պայմանների փոփոխության մասին,
- 1 օր առաջ հիշեցում է ուղարկվելու առկա պարտավորության վերաբերյալ,

Վարկի մարման ուշացման դեպքում՝ ամենաուշը մեկ օր հետո, Ձեզ տեղեկացնելու են այդ մասին:

## ԵՐԱՇԽԱՎՈՐՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ՝

- Ցանկացած ժամանակ վարկատուից պահանջել տեղեկատվություն վարկի մնացորդի չափի մասին,
- Վարկառուից հետ ստանալու Ձեր կողմից վարկի համար վճարած գումարները, ինչպես նաև վարկառուի փոխարեն կրած այլ վնասները:

**Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները, ժամկետները և սակագները համաձայն Բանկում գործող ծառայությունների սակագների:**

**ԶԳՈՒՇԱՑՈՒՄ**

**ՁԵՐ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԴՈՒՔ ՉԿԱՏԱՐԵՔ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵՔ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:**

**ՈւՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

**ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԿԱՐԺԵՆԱ ՎԱՐԿԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳԾՈՎ ԲՈԼՈՐ**

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՉԱՓԵՐՈՎ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՓԱՍՏԱՑԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻՆ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ԱՅՍՏԵՂ:

**Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի բանաձև.**

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը.**

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

i - տարեկան փաստացի տոկոսադրույքը (APR).

A –տրամադրվող վարկի սկզբնական գումարն է.

n –վարկի մարմանն ուղղված վճարի թիվը.

N -վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվը.

Kn-վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.

Dn-վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով.

i -ն՝ տարեկան փաստացի տոկոսադրույքը, կարող է հաշվարկվել, եթե հավասարման մյուս տվյալները հայտնի են վարկավորման պայմանագրից կամ այլ կերպ:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման համար կարող եք օգտվել Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման հաշվիչից http://www.armbusinessbank.am/am/page/Crediting հղումով:

**Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ**.

Համագործակցության պայմանագրի շրջանակներում աշխատավարձի գրավով կրեդիտի/վարկային գծերի տրամադրման դեպքում

- կրեդիտի/վարկային գծի գումար- 1,000,000 ՀՀ դրամ
- ժամկետ - 60 ամիս
- տարեկան տոկոսադրույք - 16%
- կրեդիտի/վարկային գծի/ կանխիկացում- 0,3%
- կրեդիտի և տոկոսագումարների մարման եղանակ- կրեդիտի գումարի ամենամսյա հավասարաչափ մարում և հաշվեգրված տոկոսների ամենամսյա մարում

**Տարեկան փաստացի տոկոսադրույքը կազմում է** 17,40 %

Պայմանավորված վարկի գումարով, ժամկետով, մարումների հաճախականությամբ և այլ օժանդակ ծառայությունների արժեքի փոփոխություններով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կարող է տարբեր լինել վերոնշյալ օրինակից:

ՎԱՐԿԱՌՈՒՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԻՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ԶԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

**«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն սպառողական վարկային հայտի վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո, նախքան** սպառողական **վարկային պայմանագրի կնքումը տրամադրում է**

**ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ՝ համաձայն ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից հաստատված «Ֆինանսական կազմակերպությունների գործարար վարվելակերպի կանոնները» կանոնակարգ 8/05-ի»:**

**ՎԱՐԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼԻՍ ՎԱՐԿԱՏՈՒՆ ՁԵԶ, ԵՐԱՇԽԱՎՈՐ(ՆԵՐ)ԻՆ (ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ) ԿՏՐԱՄԱԴՐԻ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԻ ԷԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ, ՈՐՈՒՄ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԵՆ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ:**

՛՛Ձեր ֆինանսական տեղեկատու՛՛ համակարգին կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ www.fininfo.am:

**՛՛ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ՛՛ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՈՆՄԱՆ, ՀԱՄԵՄԱՏՄԱՆ ԵՎ ՁԵԶ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏ ՏԱՐԲԵՐԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԵՇՏԱՑՆՈՂ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ Է:**

**Բանկի վերաբերյալ տվյալներ.**

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» Փակ Բաժնետիրական Ընկերություն
Հասցե՝ 0010, ՀՀ, ք.Երևան,Նալբանդյան 48, Հեռ.՝ (+37410) 59-20-20, (+37460) 37-25-00, ֆաքս՝ +37410 59 20 64
Ինտերնետային կայք՝ www.armbusinessbank.am, Էլ. Փոստ՝ info@armbusinessbank.am
Գրանցման վկայական՝ թիվ 0176, տրված 10.12.1991թ., Բանկային գործունեության լիցենզիա՝ թիվ 40, տրված 10.12.1991թ.
Ծառայությունների ցանկը, որը Բանկը իրավունք ունի մատուցել՝ համաձայն “Բանկերի և բանկային գործունեության մասին” ՀՀ օրենքի Գլուխ 4-ի: